ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/306

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Կարեն Ալեքսանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, մետաղական ցինկապատ թիթեղի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17600-2021 գրությամբ «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 20.10.2021թ.-ի թիվ 01/61-25545 գրության հիման վրա, 27.10.2021թ.-ին «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.10.2021թ.-ին:

28.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/306 համարի ծածկագիրը:

03.11.2021թ.-ին և 26.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.11.2021թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.10.2021թ.-ի թիվ 01/61-25545 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 27.09.2021 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով մետաղական ցինկապատ թիթեղի գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Կարեն Ալեքսանյան Արմենի Ա/Ձ-ն (այսուհետ Մասնակից) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել: 12.10.2021 թվականին Երևանի քաղաքապետարանի գնումների վարչություն մուտքագրված գրությամբ, Մասնակիցը հրաժարվել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42 ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 37-րդ հոդվածի 4-րդ կետը, գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է մետաղական ցինկապատ թիթեղի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի մասնակից՝ «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.10.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17600-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր անդրադառնալով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին ու հիմնավորումներին:

4. <u>ՍՑ-LO-2021/306 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից մետաղական ցինկապատ թիթեղի ձեռքբերման նպատակով 27.09.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ն:

iii. «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ն 12.10.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով հայտը ներբեռնելիս տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, ինչի պատճառով ընդհանուր գնի փոխարեն համակարգում նշվել է միավորի գին, ինչով պայմանավորված ստիպված է հրաժարվել հետագա մասնակցությունից, քանի որ նշված միավորի գնով հնարավոր չէ ամբողջ ծավալով մատակարարել ապրանքը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.10.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ի կողմից 12.10.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17600-2021 գրությամբ «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից մետաղական ցինկապատ թիթեղի ձեռքբերման նպատակով 27.09.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ն 12.10.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով հայտը ներբեռնելիս տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, ինչի պատճառով ընդհանուր գնի փոխարեն համակարգում նշվել է միավորի գին, ինչով պայմանավորված ստիպված է հրաժարվել հետագա մասնակցությունից, քանի որ նշված միավորի գնով հնարավոր չէ ամբողջ ծավալով մատակարարել ապրանքը: Հանձնաժողովի

14.10.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ի կողմից 12.10.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար, իսկ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ն, Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/42» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17600-2021 գրությամբ «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/306 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կարեն Ալեքսանյան Արմենի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**